Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ «ՓՈՐՁԱԴԱՇՏ». ԱՐՏԱՑԱՆՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԻ ՎԵՐԱՀԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Հիմնաբառեր. *COVID-19, բուհ, արտացանցային կրթություն, առցանց կրթություն, փոխլրացնող ապրանքներ*

Աշխարհին պատուհասած COVID-19 վիրուսը Նասիմ Թալեբի նկարագրած «Սև կարապն» էր, առաջին հերթին, կրթական համակարգի համար: Հոդվածում փորձում ենք վերահիմաստավորել արտացանցային կրթության դերը՝ հիմնավորելով, որ այն շարունակում է արդիական մնալ նույնիսկ տեխնոլոգիական զարգացածության ներկայիս մակարդակում: Մասնավորապես՝ փորձում ենք ցույց տալ, որ արտացանցային կրթությունը և առցանց կրթությունը ոչ թե փոխադարձ փոխարինող, այլ փոխլրացնող «ապրանքներ» են:

2019 թ. աշխարհին պատուհասած COVID-19 վիրուսն իրական մարտահրավեր է ոչ միայն մարդկային քաղաքակրթության, տնտեսության, այլև կրթական համակարգի համար: Համավարակի տարածման շղթաները «կոտրելու» նպատակով, ի թիվս այլ միջոցառումների, ոչ միայն Հայաստանը, այլև աշխարհը ստիպված է ժամանակավորապես հրաժարվել լսարանային կրթությունից՝ ծրագրված դասաժամերը լրացնելով առցանց դասաժամերի միջոցով: Սակայն, նույնիսկ մինչև COVID-19 վիրուսի ի հայտ գալը, համացանցի, համակարգիչների՝ լայն զանգվածներին հասանելիությանը զուգընթաց, XXI դարում հաճախ է կասկածի տակ դրվել լսարանային կրթության արդյունավետությունը (raison d'être): Ավելին, տեղեկատվության և գիտելիքի հսկայական պաշարներ առաջարկող բազմալեզու առցանց հաստատությունները, ինչպիսին է, օրինակ, Khan academy-ն, ինչպես նաև բավական կատարելագործված և գործիքների լայն շրջանակ առաջարկող առցանց հարթակները, որպիսիք են

zoom-ը, Google classroom-ը, GoToMeeting-ը, խաղերի միջոցով կրթող kahoot ծրագիրը, հիմք են տալիս ենթադրելու, որ հենց առցանց համալսարաններն են XXI դարի համալսարանները, մինչդեռ արտացանցային կրթությունը նախորդ դարերին բնորոշ ժամանակավրիպություն (անախրոնիզմ) է, որը պահպանվում է սովորույթի ուժով: Այս հոդվածի շրջանակում փորձելու ենք հիմնավորել արտացանցային ուսումնական հաստատությունների արդիականությունը:

Նախ՝ ներկայացնենք առցանց կրթության առանձնահատկություններն ու առավելությունները, այնուհետև անցում կկատարենք արտացանցային ուսումնական հաստատությունների անհրաժեշտության հիմնավորմանը:

Առհասարակ տեխնոլոգիաների, այդ թվում՝ կրթական տեխնոլոգիաների ոլորտի հեղափոխությունները վերջին հարյուրամյակներում սկիզբ են առել Արևմուտքում, և արևմտյան ուսումնական հաստատությունները հերթական անգամ ցույց տվեցին իրենց ճկունությունն այս առումով: ԱՄՆ-ի Օհայոյի, Հարվարդի, Միչիգանի, Վիրջինիայի, Դյուքի և հարյուրավոր այլ առաջատար համալսարաններ առաջինն արձագանքեցին ճգնաժամին՝ ամբողջությամբ փակվելով և 600 միլիարդ ԱՄՆ դոլարից ավելի գնահատվող ամերիկյան բարձրագույն կրթության շուկան տեղափոխելով առցանց հարթակ[1]: Իրականում, ԱՄՆ-ի պես գերտերությունն ունի շուրջ մեկ ու կես միլիոն դասախոս, որից 70%-ն՝ առանց առցանց դասավանդման փորձի[2]: Եվ սա այն դեպքում, երբ ԱՄՆ-ը գոնե մեկ նահանգում արդեն կիրառել էր զանգվածային առցանց դասավանդում, երբ 2005 թ. «Կատրին» փոթորիկը հարվածել էր Լուիզիանա նահանգին: Այդ աղետալի իրադարձությունից հետո երկրում ամրապնդվեցին առցանց կրթության դիրքերը, և 2019 թ. դրությամբ, ԱՄՆ-ում բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված շուրջ 2.4 միլիոն ուսանող ուսուցում է ստանում բացառապես առցանց եղանակով: ԱՄՆ-ում բակալավրիատի քառամյա կրթական ծրագրերում առցանց և արտացանցային կրթություն ստացող ուսանողների տեսակարար կշռի շարժընթացը ներկայացված է գծապատկեր 1-ում[3]:

Գծապատկերից երևում է, որ մինչև COVID-19 համավարակի բռնկումը ԱՄՆ-ում ամեն 5-րդ ուսանողն իր կրթության մի մասը ստանում էր առցանց եղանակով: Համալսարաններն այդ քաղաքականությունը որդեգրել էին ծախսերը կրճատելու, դասախոսների բեռնվածությունը թեթևացնելու ու նրանց հետազոտական գործունեությունը խթանելու նպատակով: Նշենք, որ առցանց կրթությունը լինում է երկու տեսակի՝ համաժամանակյա և ոչ համաժամանակյա: Առաջին դեպքում ուսանողը որոշակի ամրագրված ժամի տեսակապ է հաստատում դասախոսի հետ՝ հնարավորություն ունենալով նրան տալու հարցեր և նույն պահին ստանալու պատասխաններ: Երկրորդ դեպքում կիրառվում է ձայնագրված դասախոսությունների տարբերակը, երբ ուսանողը, հնարավորություն չունենալով տեսակապի միջոցով առցանց հարցեր հղելու, իրեն հարմար ժամի մուտք է գործում համապատասխան կայք և լսում այնտեղ տեղադրված դասախոսությունը: Բնականաբար, համաժամանակյա դասախոսությունների կազմակերպումը շատ ավելի ծախսատար է, և դրանով է պայմանավորված, որ ԱՄՆ-ի դասախոսների գերակշիռ մեծամասնությունը չունի առցանց դասավանդման փորձ: Հավելենք, որ, COVID-19 համավարակի բռնկմամբ պայմանավորված, դասընթացների զանգվածային տեղափոխումը դեպի առցանց հարթակներ առավել մեծ մարտահրավեր է, նախ և առաջ, օտարերկրյա ուսանողների համար, քանի որ առցանց կրթության ժամերը հաճախ համընկնում են հայրենիք վերադարձած օտարերկրյա ուսանողների քնելու

[1] National Public Radio, The Coronavirus Outbreak And The Challenges Of Online-Only Classe, March 13, 2020, available at https://www.npr.org/2020/03/13/814974088/the-coronavirus-outbreak-and-the-challenges-of-online-only-classes

[2] Bloomberg, Coronavirus Forces $600 Billion Higher Education Industry Online, 19 March 2020, available at https://www.bloomberg.com/news/articles/2020-03-19/colleges-are-going-online-because-of-the-coronavirus

[3] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԱՄՆ-ում առցանց և արտացանցային եղանակով կրթություն ստացող բակալավրիատի ուսանողների տեսակարար կշիռը 2013-2018 թթ. (%)[4]

ժամի հետ, և նրանք ստիպված են կեսգիշերն անց առցանց դասախոսությունների հաճախել[5]:

Այսպիսով՝ առցանց կրթությունն ունի հետևյալ առավելությունները.

1. այն ավելի էժան է՝ գրեթե բոլոր առումներով, ու թեպետ ենթադրվում են համացանցային ծառայությունների որոշակի վճարներ, սակայն և՛ ուսանողը, և՛ դասախոսը խնայում են տրանսպորտի ուղեվարձ, ապրելու և սնվելու վրա ծախսվող միջոցներ և ամենակարևորը՝ ժամանակ:

2. COVID-19 վիրուսի համավարակը ցույց տվեց, որ առհասարակ ֆորսմաժորային իրավիճակներում առցանց կրթությունն իրական սպեղանի է, եթե ոչ համադարման: Եթե չլինեին ժամանակակից տեխնոլոգիաները և վերջիններիս ընձեռած հնավորությունները, ապա անհնար կլիներ ներկայիս պայմաններում պատշաճ կրթության մատուցումը:

3. Այն ապահովում է ճկունություն: Պետք է հասկանալ, որ ուսանողը (բառի հիմքում «ուսանել» բայն է) միայն որոշակի տարիքային խմբի, հիմնականում՝ երիտասարդ և կենսուրախ տղան կամ աղջիկը չէ: Հաճախ ուսանելու ցանկություն ունենում են նաև կայացած գործարարները, որոնք իրենց չեն կարող թույլ տալ՝ ամեն օր արձանագրված ժամին դասի գնալու «ճոխություն», քանի որ ստիպված են ճամփորդել, գործուղման մեկնել և այլն: Օտարերկրյա բուհերի բիզնեսի ֆակուլտետներում հաճախ կարելի է հանդիպել 40 տարեկանից բարձր, իսկ հաճախ՝ նաև ավելի պատկառելի տարիքի ուսանողների, որոնք իրենց մի շարք դասախոսներից ավելի մեծ կենսափորձ ունեն: Եվ այդպիսի բազմազբաղ ուսանողների համար առցանց կրթությունն աշխատանքը և ուսումը համատեղելու հիմնական, եթե ոչ միակ եղանակն է:

Եվ, վերջապես, արժե խոսել առցանց կրթության համակարգի մի շարք թերությունների մասին: Մասնավորապես՝ առցանց կրթության ժամանակ կարևորվում է տեսողական կապը (eye contact) դասախոսի և դասընկերների հետ, ինչպես նաև նյութի վրա կենտրոնանալու տևական ժա-

[4] Աղբյուրը՝ National Center for Education Statistics, available at https://nces.ed.gov/programs/digest/d18/tables/dt18_311.15.asp

[5] Al Jazeera, US universities switch to online courses due to coronavirus, 11 March, 2020, available at https://www.aljazeera.com/news/2020/03/universities-switch-online-courses-due-coronavirus-200310202804023.html

մանակը: Կցանկանայինք առանձնահատուկ կերպով ընդգծել, որ լսարանում դասախոսները կրթում են ոչ միայն ապագա մասնագետին, այլև մարդուն և քաղաքացուն: Առցանց կրթության պարագայում և՛ ուսանողները, և՛ դասախոսները, հաշվի առնելով ձայնագրելու ավելի լայն հնարավորությունը և ուսանողների սենյակներում այլ անձանց գտնվելու հավանականությունը, փորձում են առավելագույնս խմբագրել իրենց ամեն մի խոսքը, ավելի կաշկանդված են իրենց կարծիքն արտահայտելու հարցում: Թարմացնող և լիցքաթափող կատակները դառնում են առավել հազվադեպ՝ անհրապուրիչ դարձնելով դասաժամը: Միաժամանակ, ուսանողները, փորձելով առցանց դասին զուգահեռ զբաղվել այլ գործերով (օրինակ՝ սնվելով կամ թարգմանություններ անելով), դժվարություններ են ունենում նյութի պատշաճ յուրացման հարցում: Խնդիրներ են հարուցում նաև կապի, ձայնի և տեսակապի հաճախակի ընդհատումները, ինչպես նաև հեռավոր շրջաններում կապի անհասանելիությունը: Էլ ավելի մեծ խնդիր է առցանց քննությունների հանձնումը, քանի որ դժվար է ապահովել ուսանողների կողմից պատեհապաշտական (օպորտունիստական) վարքագծի, այդ թվում՝ արտագրությունների բացառումը: Նշյալ ռիսկն էապես մեծանում է առցանց դասեր պատասխանելիս:

Մեր կարծիքով, արտացանցային ուսումնական հաստատությունները դեռևս չեն կորցրել իրենց արդիականությունը հետևյալ պատճառներով.

1. Համալսարաններում, հումանիտարին զուգընթաց, դասավանդվում են նաև բնագիտական առարկաներ, որոնց ամբողջական յուրացման համար գիտափորձերն ու լաբորատոր դասերն ավելի քան անհրաժեշտ են: Որքան էլ որ առցանց գործիքները նախատեսված լինեն տեսությունն առավելագույնս մատչելի բացատրելու համար, այնուամենայնիվ, դժվար է պատկերացնել ուսանողին առցանց քիմիական փորձեր անելիս, որոնք առանց մասնագետի ներկայության, անմիջական օժանդակության և ուղղորդման, ոչ միայն բարդ են, այլև վտանգավոր: Իսկ սարքերի ու սարքավորումների չափերի և արժեքների վերաբերյալ նույնիսկ խոսելն է ավելորդ:

2. Թվում է՝ եթե ոչ բնագիտական, ապա գոնե հումանտար և սոցիալական գիտությունների ամբողջական դասավանդումն առցանց կերպով իրագործելի է: Սակայն, հումանիտար և սոցիալական գիտություններն էլ ունեն իրենց առանձնահատկությունը: Դիցուք՝ ապագա փաստաբանին, դատավորին և իրավաբանին անհրաժեշտ են հաղորդակցության հմտություններ՝ զարգացնելով ճարտասանական խոսքը և հարստացնելով բառապաշարը: Ի վերջո, ապագա փաստաբանը խոսելու է ոչ թե առցանց, այլ ամբիոնից, ուստի բազմության առջև խոսքի մշակույթն անհրաժեշտ է զարգացնել դեռևս ուսանողական տարիներին: Հավելենք, որ դատախաղերի և այլ սիմուլյացոն խաղերի միջոցով գործնական հմտությունների զարգացումն առցանց կազմակերպելու պարագայում իր արդյունավետությամբ չի կարող համեմատվել լսարանում ստացած փորձի և գիտելիքների հետ:

3. Գուցե պարադոքսային կարող է թվալ, բայց կրթական հաստատություններ դիմում և խոշոր գումարներ են վճարում ոչ միայն կրթություն ստանալու ակնկալիքով: Կրթական հաստատությունները նաև անձի սոցիալականացման և ձեռք բերված սոցիալական կապերը մասնագիտական գործունեության ընթացքում օգտագործելու համար են: Նման սոցիալական կապիտալը, հիրավի, ոչ նյութական ակտիվ է, որի «շահութաբաժինները» շրջանավարտը ստանում է իր ողջ մասնագիտական գործունեության ընթացքում տարբեր ձևերով՝ համատեղ բիզնես հիմնելուց՝ մինչև համատեղ գիտական հոդվածի հրապարակում: Այս համատեքստում, արժե նշել ԱՄՆ-ի մի շարք համալսարաններում գործող գաղտնի միությունների մասին, որոնցից ամենանշանավորներն են Յեյլի համալսարանում գործող «Կմախք և ոսկորներ» միությունը (Skull and Bones), Վիրջինիայի համալսարանում գործող «7 հասարակությունը» (Seven Society), Ֆլորիդայի համալսարանում գործող «Այրվող նիզակ» միությունը (Burning Spear) և այլն:

Այս գաղտնի և կիսագաղտնի ակումբների անդամներին միավորում է այն, որ վերջիններս ուսանողական տարիներին համատեղ ճանապարհ են անցել՝ ստեղծելով փոխադարձ վստահության սոցիալական ամուր կապեր, որոնք ծառայեցրել են իրենց և ակումբի այլ անդամների առաջխաղացման ապահովմանը: Անկախ այն հանգամանքից, թե այդ ակումբների շուրջ հյուսվող լեգենդներն ու դիպվածները որքանով են համապատասխանում իրականությանը, փաստն այն է, որ, օրինակ, «Կմախք և ոսկորներ» (Skull and Bones) ակումբին են անդամակցել ԱՄՆ 27-րդ նախագահ Ուիլյամ Հովարդ Թաֆտը, Ջորջ Բուշ ավագն ու Ջորջ Բուշ կրտսերը, մի շարք սենատորներ, բարձրագույն դատարանի անդամներ, կոնգրեսականներ և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ[6]: Կասկածից վեր է, որ, առնվազն սոցիալական կապիտալի ստեղծման տեսանկյունից, առցանց կրթությունը չի կարող մրցակցել արտացանցայինի հետ:

4. Գիտելիքից և սոցիալական կապերից զատ, ուսանողը վճարում է նաև ապրանքանիշի (բրենդի) համար: Գաղտնիք չէ, որ տարբեր վարկանիշներով լավագույն բուհերն ապրանքանիշ են, և հաճախ միևնույն կամ գրեթե համանման կրթության համար վճարվող գումարն ըստ բուհերի շոշափելիորեն տարբերվում է: Անշուշտ, հնարավոր է ձևավորել նաև առցանց ապրանքանիշներ: Այս պարագայում, առցանց բարձրագույն կրթության ապագան կախված է նրանից, թե արդյոք հումանիտար և սոցիալական գիտությունների բնագավառում ավանդույթներ և ինստիտուցիոնալ հիշողություն ունեցող արևմտյան առաջատար բուհերը (ինչպես երևվում է վերոգրյալից՝ բնագիտական մասնագիտությունների պարագայում ամբողջությամբ առցանց ուսուցման իրականացումն անհնար է և դեռևս՝ անհեռանկարային) կնախընտրեն ստեղծել զուգահեռ առցանց համալսարաններ: Դժվար է պատկերացնել, որ COVID-19 համավարակի հաղթահարումից հետո, օրինակ, Օքսֆորդի համալսարանն ամբողջությամբ կհրաժարվի արտացանցային կրթությունից, նույնիսկ այն պարագայում, եթե հաշվարկի արդյունքում պարզվի, որ այդպիսով հսկայական միջոցներ են խնայվում: Չմոռանանք, որ առաջատար համալսարաններում սովորում են մեծ թվով օտարերկրացի ուսանողներ, որոնց համար ուսումը նաև միջմշակութային հաղորդակցության փորձ է, իսկ ընդունող երկրների համար՝ հսկայական եկամուտ: Այսպես՝ շուրջ 25 միլիոն բնակչությամբ Ավստրալիան, որն ունի բարձրագույն կրթության՝ աշխարհում ամենամրցունակ համակարգերից մեկը, ըստ պաշտոնական տվյալների, 2018 թ. հավաքագրել է շուրջ 900.000 օտարերկրացի ուսանող[7]: Դիցուք՝ Ավստրալիայի փաստացի բնակչության 3.5%-ը ոչ միայն ուսման վարձավճար է տալիս, այլև սնվում է, վարձակալում բնակարաններ կամ ուսանողական հանրակացարաններ, ինքնաթիռի տոմս գնում և այլն՝ այդպիսով նպաստելով երկրի արդյունավետ պահանջարկի և ՀՆԱ մեծացմանը: Այդ ուսանողներին «կորցնելը» երկրի տնտեսության համար մեծ «շքեղություն» կլինի, և եթե նույնիսկ համավարակի արդյունքում համալսարանները հայտնաբերեն, որ առցանց կրթությունը, նեղ կազմակերպական շահերի տեսանկյունից, առավել նպատակահարմար է և շահավետ, ապա կրթությունն ամբողջությամբ համացանց տեղափոխելու դեպքում, ամենայն հավանականությամբ, կհանդիպեն կառավարության կոշտ դիմադրությանը:

Կարելի է ենթադրել, որ աշխարհի առաջատար բուհերի կողմից կրթության ավանդական ձևի՝ արտացանցայինի պահպանումը, չի կարող կանխարգելել զուգահեռաբար հիմնադրվող առցանց համալսարանների տարածմանը: Սակայն, առցանց համալսարանները մեծ ճանապարհ ունեն անցնելու, որպեսզի իրենց տված

[6] New York Times, .Barron, James "Male Fortress Falls at Yale: Bonesmen to Admit Women", July 25, 1991, available at https://www.nytimes.com/1991/07/25/nyregion/male-fortress-falls-at-yale-bonesmen-to-admit-women.html

[7] Australian Government, international students data 2018, available at https://internationaleducation.gov.au/research/International-Student-Data/Pages/InternationalStudentData2018.aspx#Annual_Series

հավաստագրերն ու վկայականները գործատուների և հանրության աչքերում ներշնչեն նույնքան վստահություն, որքան արտացանցային համալսարանների վկայականներն են վաստակել տասնամյակների և նույնիսկ՝ հարյուրամյակների ընթացքում: Հետևաբար՝ ապրանքանիշը կարևորող ուսանողները դեռևս կշարունակեն նախապատվությունը տալ արտացանցային կրթությանը, և այս առումով, COVID-19 համավարակը սոսկ ժամանակավոր խոչընդոտ է և ոչ թե բարձրագույն կրթության կազմակերպման և կառավարման մեջ հեղափոխական փոփոխությունների ազդակ և մեկնակետ:

Վերջաբանի փոխարեն կամ մեր պատասխանը երեք «արդյոքներին»

Արդյո՞ք առցանց կրթությունը էքզիստենցիալ մարտահրավեր է ավանդական, արտացանցային կրթությանը: Արդյո՞ք առցանց կրթությունն այն է, ինչ մեզ սովորեցրել են տնտեսագիտական համալսարանում, այսինքն՝ նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ապահովում: Արդյո՞ք արտացանցային կրթությունը ժամանակավրեպ շքեղություն է:

Վստահ ենք, որ արտացանցային կրթությունը շարունակում է պահպանել իր արդիականությունը նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիաների՝ օրըստօրե զարգացմամբ պայմանավորված առցանց կրթության «հաղթարշավի» պայմաններում: Անշուշտ, ֆորսմաժորային իրավիճակներում, ինչպիսին է ներկայում COVID-19 համավարակը, առցանց կրթությունը ոչ այլ ինչ է, քան սպեղանի: Սակայն, եթե ձևակերպենք տնտեսագիտորեն, առցանց կրթությունը և արտացանցային կրթությունը բացարձակապես փոխադարձաբար միմյանց փոխարինող ապրանքներ չեն, և վերջիններիս անտարբերության կորը հեռու է բացասական կորությամբ ուղիղ գիծ լինելուց: Համավարակն ապացուցեց, որ վերջիններս կարելի է դիտարկել որպես L-աձև անտարբերության կոր ունեցող կատարյալ փոխլրացնող ապրանքներ (perfect substitutes), քանի որ ժամանակակից աշխարհում արդեն իսկ անհնար է պատկերացնել ամբողջությամբ արտացանցային կրթություն, առանց օժանդակ առցանց գործիքների, որոնցից է ժամանակակից առաջատար համալսարաններում, այդ թվում՝ ՀՊՏՀ-ում գործածվող moodle համակարգը, իսկ ամբողջությամբ առցանց կրթությունն ունի վերը թվարկված բազմաթիվ սահմանափակումները, որոնք հնարավոր է հաղթահարել միայն առցանց և արտացանցային կրթության համադրությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Al Jazeera, US universities switch to online courses due to coronavirus, 11 March, 2020, available at https://www.aljazeera.com/news/2020/03/universities-switch-online-courses-due-coronavirus-200310202804023.html
2. Australian Government, international students data 2018, available at https://internationaleducation.gov.au/research/International-Student-Data/Pages/InternationalStudentData2018.aspx#Annual_Series
3. Bloomberg, Coronavirus Forces $600 Billion Higher Education Industry Online, 19 March 2020, available at https://www.bloomberg.com/news/articles/2020-03-19/colleges-are-going-online-because-of-the-coronavirus
4. United States Department of Education, National Center for Education Statistics, available at https://nces.ed.gov/programs/digest/d18/tables/dt18_311.15.asp
5. National Public Radio, The Coronavirus Outbreak And The Challenges Of Online-Only Classe, March 13, 2020, available at https://www.npr.org/2020/03/13/814974088/the-coronavirus-outbreak-and-the-challenges-of-online-only-classes
6. New York Times, .Barron, James "Male Fortress Falls at Yale: Bonesmen to Admit Women", July 25, 1991, available at https://www.nytimes.com/1991/07/25/nyregion/male-fortress-falls-at-yale-bonesmen-to-admit-women.html

Альберт АЙРАПЕТЯН
Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

КОРОНАВИРУС КАК «ЛАКМУСОВЫЙ ТЕСТ» УНИВЕРСИТЕТСКОГО ОБРАЗОВАНИЯ: ПЕРЕОСМЫСЛЕНИЕ РОЛИ УНИВЕРСИТЕТСКОГО ОБРАЗОВАНИЯ

Катастрофа под названием COVID-19 - это знаменитый «черный лебедь», описанный Нассимом Николасом Талебом, который перевернул мир с ног на голову, загнав мировую экономику в тупик. В этой статье мы попытаемся пересмотреть роль современных автономных университетов и показать, что они по-прежнему актуальны в 21-ом веке. В частности, мы попытаемся доказать, что онлайн образование и обучение в кампусе, являются совершенными комплементами, а не совершенными субститутами.

Ключевые слова: *COVID-19, университет, кампусное образование, онлайн образование, комплементарные блага*

Albert HAYRAPETYAN
PhD in Economics, Assistant Professor in the Chair of International Economics of ASUE

CORONAVIRUS AS A "LITMUS PAPER' FOR THE UNIVERSITY EDUCATION: RECONSIDERING THE ROLE OF THE CAMPUS EDUCATION

The disaster named COVID-19 was the famous ''black swan'' described by Nassim Nicholas Taleb that turned the world upside down bringing the global economy to a standstill. In this article, we will try to reconsider the role of the modern offline universities and show that they are still relevant in 21th century. In particular, we will try to substantiate that offline education and campus education are, using the glossary of Economics, perfect complements rather perfect substitutes.

Keywords: *COVID-19, university, campus education, online education, complements*